

ԻՆՔՆԱԳՈՎԵՍՏԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է ներկայացնել ինքնագովեստ արտահայտող խոսքային ակտերի իմաստային և գործաբանական առանձնահատկությունները: Ի տարբերություն գովեստի՝ ինքնագովեստը բացասական ընկալում ունի: Այս ակտի նպատակը ուշադրության, հիացմունքի արժանանալն է: Ինքնագովեստ իրականացնելիս խոսողը դրական լույսի ներքո ներկայացնում է իր արժանիքները, հաջողությունները, հմտությունները և որակները: Ինքնագովեստը գովեստի այնպիսի տեսակ է, երբ խոսողը ինքն իր հասցեին է ուղղում դրական գնահատական, այսինքն՝ ինքնագովեստ իրականացնելիս խոսողը գնահատման սուբյեկտն է և միաժամանակ օբյեկտը: Նա փորձում է ամրապնդել իր ինքնագնահատականը, տպավորություն թողնել մյուսների վրա, ստեղծել հեղինակություն: Ինքնագովեստ իրականացնող անձի մտադրությունը իր նպատակին հասնելն է՝ փորձելով արժանանալ խոսակցի հավանությանը, ինչի հետևանքով նրա խոսքային և ոչ խոսքային վարքագիծը կարող է արտահայտվել նույնիսկ ինքնանվաստացմամբ: Եթե ինքնագովեստը համեստ է և համատեքստին համահունչ, այն կարող է բարձրացնել անձի հեղինակությունը, իսկ չափազանցած ինքնագովեստը կարող է ընկալվել որպես ամբարտավանություն: Այս ակտի իրականացումը պայմանավորված է հաղորդակցվողների տարբեր կարգավիճակային և դերային բնութագրերով: Հետազոտության հիմքում ընկած է նկարագրական մեթոդը:

Բանալի բառեր – *խոսքային ակտ, ինքնագովեստ, իլլոկուտիվ մտադրություն, պերլուկուտիվ արդյունք, հաղորդակցական նպատակ, հասցեատեր*

* **Նարինե Գասպարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ

Нарине Гаспарян – кандидат филологических наук, доцент, ассистент кафедры английской филологии ЕГУ

Narine Gasparyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Assistant at YSU Chair of English Philology

Էլ. փոստ՝ narinegasparyan@ysu.am <https://orcid.org/0009-0006-4716-4362>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.03.2025

Գրախոսվել է՝ 09.04.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

Ներածություն

Իրականացնելով պերլոկուտիվ ազդեցությամբ խոսքային ակտեր՝ խոսողը նախապես պլանավորում է սեփական խոսքային ակտի հետևանքները: Խոսքային ակտի իրականացումը խոսողի համար ինքնանպատակ չէ. հասցեագրողը ձգտում է որոշակի ադեցություն գործել հասցեատիրոջ վրա, հասնել որոշակի պերլոկուտիվ արդյունքի կամ, այլ կերպ ասած, իրականացնել իր իլլոկուտիվ մտադրությունը¹:

Խոսողը կարող է անուղղակիորեն իրականացնել իր հաղորդակցական մտադրությունները փոխկապակցված ասույթների ամբողջական շղթայի միջոցով, որոնք կառուցվածքային առումով կազմակերպված են, կազմում են իմաստային և հաղորդակցական միասնություն՝ մենախոսական, երկխոսական խոսույթ: Մտադրված ասույթին մասնակցում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսին են իրադրության և նախադրության թվանդակության դասակարգումը, բառային հագեցվածությունը և քաղաքավարության կարգը²:

Ամեննին էլ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր իլլոկուտիվ դաս ներկայացված լինի համապատասխան բառույթով: Կարող են լինել ամբողջական ասույթներ, որոնք հավասարազոր են գործաբանական առումով, այսինքն՝ բառույթին համապատասխանող իլլոկուտիվ իմաստի տեսանկյունից³:

Հասցեագրողը, իրականացնելով պերլոկուտիվ ազդեցությամբ խոսքային ակտ, փորձում է փոխել հասցեատիրոջ վերաբերմունքը սեփական դիրքորոշման կամ վարքագծի նկատմամբ դեպի դրականը: Տրամաբանական է ենթադրել, որ հենց պերլոկուտիվ արդյունքի կանխատեսումն է որոշում խոսողի կողմից իլլոկուտիվ մտադրության իրականացման համար որոշակի մեթոդի ընտրությունը: Պերլոկուտիվ արդյունքը ասույթներում չի ներկայացվում լեզվական կոնկրետ միջոցներով, սակայն իրականացվում է հաղորդակցական մտադրության ձևերի ընտրության միջոցով, ինչն էլ արտահայտված է խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստում⁴: Այդ պատճառով էլ խոսողի իլլոկուտիվ մտադրությունը հաշվի առնելը կարևոր է կոնկրետ հաղորդակցական իրադրությունում խոսքային ակտը իրականացնելու համար: Դրա հետ մեկտեղ՝ դրական արդյունք ստանալու համար հարկավոր է

¹ St' u **Формановская, Н.И.** Эмоции, чувства, интенции, экспрессия в языковом и речевом выражении // Эмоции в языке и речи: Сборник научных статей / Под ред. И.А. Шаронова. М.: РГГУ, 2005, էջ 106-116:

² St' u **Кларк, Г. Г., Карлсон, Т. Б.** Слушающие и речевой акт // Новое в зарубежной лингвистике, Вып. 17. Теория речевых актов. М.: Прогресс, 1986, էջ 276:

³ St' u **Богданов, В.В.** Коммуникативная компетенция и коммуникативное лидерство // Язык, дискурс, личность. Тверь: Издательство Тверского университета, 1990, էջ 28:

⁴ St' u **Davis, S.** Perlocutions // Speech Act Theory and Pragmatics. Edited by John R. Searle, University of California, USA. 1980, էջ 37-55:

նկատի ունենալ հասցեատիրոջ դերային (սոցիալական և հոգեբանական), անհատական հատկանիշները, հենքային գիտելիքները:

Գովեստի խոսքային ակտը ներակա-պերֆորմատիվ ասույթներ պարունակող, արտահայտչական խոսքային ակտ է: Սրա իլլոկուտիվ նպատակն է փորձել գովելու միջոցով խրախուսել դիմացինին և մղել կատարելու որոշակի գործողություն, որը ներկայացվում է նախադրությային բովանդակությամբ: Նախնական պայմանն այն է, որ լսողն ի վիճակի է իրականացնելու այդ ծրագիրը, իսկ անկեղծության պայմանը ենթադրում է, որ խոսողը ցանկանում է, որ լսողն իրականացնի տվյալ գործողությունը: Գովեստը անկեղծ դրական գնահատում է, որը սովորաբար ընկալվում է որպես զրուցակցի արարքին տրված դրական գնահատական: Այն արտահայտում է խոսողի անկեղծ վերաբերմունքը խոսակցի նկատմամբ, դրական գնահատողական արձագանքը նրա արարքին⁵:

Ինքնագովեստը՝ որպես պերլոկուտիվ ազդեցությամբ խոսքային ակտ

Գովեստի մեջ ընդգրկել ենք **ինքնագովեստը**, որը, ի տարբերություն գովեստի, բացասական երանգավորում ունի: Իրականացնելով ինքնագովեստի խոսքային ակտ՝ խոսողը խախտում է քաղաքավարության սկզբունքը, քանի որ ինքնագովեստի նպատակը հիմնականում ուշադրության, հավանության, հիացմունքի և գովեստի արժանանալու ակնկալիքն է շրջապատից: Ինքնագովեստը, մեր կարծիքով, կարելի է բնութագրել իբրև պարծենկոտություն: **Ինքնագովեստը** գովեստի այնպիսի տեսակ է, երբ խոսողը ինքն իր հասցեին է ուղղում դրական գնահատական, այսինքն՝ տվյալ դեպքում ինքնագովեստի հասցեատերը հանդես է գալիս միաժամանակ որպես գովեստի հասցեատեր: Նման արտահայտությունները որոշ չափով գրավել են լեզվաբանների ուշադրությունը, և Ե. Մ. Վոլֆը դրանք անվանում է գնահատման ռեֆլեքսիվներ⁶:

Խոսողի հաղորդակցական մտադրությունը ինքնագովեստ արտահայտող խոսքային ակտում միտված է իրականացնելու լսողի վերաբերմունքի դրական փոփոխություն խոսողի նկատմամբ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խոսողը ենթադրում ու պլանավորում է պերլոկուտիվ ազդեցություն: Պերլոկուցիան բարդ երևույթ է, որը ներառում է երկու բաղադրիչ. 1) պերլոկուտիվ ազդեցություն, որը կարող է ունենալ խոսքային արտահայտության տարբեր ձևեր, և 2) պերլոկուտիվ գործողություն, որը խոսողի նպատակների ձեռքբերման վկայությունն է ու գտնվում է ասույթի սահմաններից դուրս⁷: Մպասվող պերլոկուտիվ ազդեցության և արդյունքի նշանակությունը մտնում է խոսքային ակտի իմաստային կառուցվածքի մեջ:

⁵ Տե՛ս **Գասպարյան, Ն.** Գովաբանության դիսկուրսի իմաստագործաբանական բնութագիրը // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2024, № 3, 99-110 էջեր:

⁶ Տե՛ս **Вольф, Е.М.** Функциональная семантика оценки. М.: Наука, 1985:

⁷ Տե՛ս **Davis, S.** Perlocutions // Speech Act Theory and Pragmatics. Edited by John R. Searle, University of California, USA. 1980, էջ 37-55:

Գովեստի իրականացման ժամանակ խոսողն ունի միայն մեկ դեր՝ լինել գովեստի սուբյեկտ: Նրա օբյեկտն այն անձն է, ում ինքը գովում է: Իսկ **ինքնագովեստ** իրականացնելիս խոսողը միաժամանակ դրական գնահատականի և՛ սուբյեկտն է, և՛ օբյեկտը: Ինքնագովեստի պերլոկուտիվ ազդեցությունը ընդհանուր առմամբ հանգեցնում է խոսողի կողմից զրուցակցի մեջ անհրաժեշտ հույզերի (ուրախություն, համակրանք, կարեկցանք և այլն) առաջացման փորձին, խոսողի ինքնահաստատմանը, որը նման դեպքում, բնականաբար, ինչպես նշեցինք, դառնում է գնահատման և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ:

Ուսումնասիրվող ակտի հաջող իրագործումը կախված է կոնկրետ փաստարկային պայմանների ճիշտ հաշվարկից, որոնք արտացոլում են հասցեագրողի և հասցեատիրոջ կադապարների յուրահատկությունն այն դեպքում, երբ խոսողը փորձում է իր հանդեպ տրամադրել խոսակցին: Այն ուսումնասիրվում է որպես խրախուսում ստանալու փորձ: Այն իրադրություններում, որոնցում իրագործվում է խոսողի կողմից սոցիալական խրախուսում ստանալու փորձը, բնութագրական է շարժառիթների առկայությունը հաճոյախոսության առիթ ստեղծող արտահայտություններով, իր արարքների կամ որակների մասին հարցման միջոցով և այլն: Նկարագրվող իրադրության շրջանակներում պատասխան-արձագանքները կարող են լինել կեղծ դրական կամ բացասական, ինչը խոսողի կողմից իր հասցեին խրախուսում ստանալու դիտավորյալ փորձի հետևանք է:

Ինքնագովերգման բնորոշ օրինակ կարող է համարվել կադապարային կառուցվածք ունեցող հաստատական ասույթը.

I don't want to boast, but... / Չեմ ուզում պարծենալ, բայց...

Ինքնագովերգմանը բնորոշ են բացականչական և հարցական նախադասությունները և հետևյալ տեսակի արտահայտությունները

to do all by oneself, to want to be heard (noticed, seen, admired, etc.) / ամեն ինչ ինքնուրույն անել, ցանկանալ, որ քեզ լսեն (նկատեն, տեսնեն, հիանան) և այլն:

Ինքնագովեստի խոսքային ակտի համար, ի տարբերություն զուտ գովեստի, առավել բնորոշ է այդ ակտի իրականացումը բարդ նախադասությունների միջոցով:

Ինքնագովեստի առանձնահատկությունն այն է, որ այն կարող է իրագործվել խոսքի մեջ ուղղակի և անուղղակի դրական ինքնագնահատականի միջոցով: Ընդ որում, ուղղակի դրական ինքնագնահատականը առավել հաճախ կեղծված չէ և առավելապես մոտ է գովեստին: Օրինակ՝

The important thing is to construct: I am constructive; I am a poet ⁸.

Կարևորը ստեղծելն է. ես ստեղծող եմ. ես բանաստեղծ եմ:

⁸ Maugham, W. S. Theatre. Moscow: Vyssaya Skola, 1985.

Վերը նշված օրինակը ուղղակի դրական ինքնագնահատական է: Անուղղակի դրական ինքնագնահատականը կարելի է նույնացնել խոսողի կողմից իր հասցեին գրուցընկերոջից գովասանք ստանալու փորձով և դրանով իսկ իր շրջապատում հատկանիշների կամ արարքների գերազանցության հաստատմամբ:

Ինքնագնահատման հիմնական միջոցը խոսողի հարցումն է (ակնհայտ կամ ոչ ակնհայտ) իր արարքների և/կամ հատկանիշների մասին և այլն:

Այստեղ տարբերակումն ընդհանուր առմամբ կատարվում է որոշակի բառակապակցությունների և նախադասությունների շարահյուսական տեսակների միջոցով:

Gwendolen (satirically): *I am glad to say that I have never seen a spade. It is obvious that our social spheres have been widely different* ⁹.

Գվենդոլեն (երգիծանքով). *Ուրախ եմ ասել, որ երբևէ բահ չեմ տեսել: Ակնհայտ է, որ մեր սոցիալական ոլորտները շատ տարբեր են եղել:*

Ուսումնասիրված ակտերում տարբեր է նաև հաղորդակցման ընդհանուր ուղղվածությունը: Գովեստ իրականացնելիս խոսողը մոտեցնում է իրեն գրուցակցին (գովեստի օբյեկտին)՝ ընդգծելով նրա դրական հատկանիշները: Այստեղ առավել բնութագրական են *you, your/դու, քեզ* և այլ դերանունները: Ինքնագովեստը, ընդհակառակ, արտացոլում և ընդգծում է հենց խոսողի դրական հատկանիշները, որը այս դեպքում դրական գնահատականի և՛ սուբյեկտ է, և՛ օբյեկտ: Այստեղ առավել բնութագրական են *I, my/ես, իմ* դերանունները:

Քանի որ ինքնագովերգման նպատակը հիմնականում ուշադրության, հավանության և գովասանքի արժանանալն է շրջապատի կողմից, ուստի ինքնագովերգման արտահայտման ոչ խոսքային կարևոր միջոցներից են հնչերանգը, շեշտը, դիմախաղը, ձեռքի շարժումները:

Clay: *Everyone took me as an Englishman.*

Fleming: *That must have gratified you very much, Mr. Clay.*

Clay: *Of course. I haven't a trace of an American accent. I suppose that was the reason. And then my clothes. (He looks at them with satisfaction.)* ¹⁰

Քլեյ. *Բոլորն ինձ ընդունեցին որպես անգլիացի:*

Ֆլեմինգ. *Դա պետք է որ ձեզ շատ գոհացրած լինի, միստր Քլեյ:*

Քլեյ. *Բնարկե: Իմ խոսքում ամերիկյան արտասանության նույնիսկ նշույլ չկա: Ենթադրում եմ, որ դա էր պատճառը: Եվ հետո իմ հագուստը: (Նա գոհունակությամբ նայում է դրանց:)*

⁹ Wilde, O. The Importance of Being Earnest. UK: Longman, 2005.

¹⁰ Maugham, W. S. Our Betters // Maugham S. Selected Plays. London: Pan Books, 1977.

Հաղորդակցման գործընթացում գովեստի խոսքային ակտը բնականաբար պայմանավորված է որոշակի համատեքստով: Նման համատեքստը, ըստ ակտի իլլոկուտիվ իմաստի և պերլոկուտիվ ազդեցության, գովեստի համար որպես ճիշտ (չափանիշային) ներկայացվում է երկու ձևով՝ խոսողի կողմից գովեստի օբյեկտի գերազանցության, առաջնայնության հաստատման իրադրություն (գովեստի համար) և խոսողի ինքնահաստատման՝ հաղորդակցի կողմից իր հասցեին գովեստի ակնկալման իրադրություն (ինքնագովեստի համար):

Վերլուծենք հետևյալ հաղորդակցական իրադրությունները.

1. Mrs. Webb: ...*I'd rather have my children healthy than bright.*

Emily: *I'm both, mama. you know I am. I'm the brightest girl in school for my age. I have a wonderful memory*¹¹.

Տիկին Ուեբ. ... Ես կնախընտրեի, որ իմ երեխաները առողջ լինեն, քան խելացի:

Էմիլի. Ես և՛ առողջ եմ, և՛ խելացի, մայրիկ: Դու գիտես, որ ես այդպիսին եմ: Ես իմ տարիքի համեմատ դայրոցի ամենախելացի աղջիկն եմ: Ես հիանալի հիշողություն ունեմ:

2. *There is nothing that Art cannot express, and I know that the work I have done, since I met Dorian Gray, is good work, is the best work of my life*¹².

Չկա մի բան, որ արվեստը չկարողանա արտահայտել, և ես գիտեմ, որ այն աշխատանքը, որը ես արել եմ, երբ հանդիպել եմ Դորիան Գրեյին, լավ աշխատանք է, իմ կյանքի լավագույն գործն է:

3. *I asked Stroeve if he was working.*

"Working? *I'm painting better than I've ever painted before*"¹³.

Ես հարցրեցի Սթրովին, արդյոք նա աշխատում է:

-Աշխատո՞ւմ: Ես ավելի լավ եմ նկարում, քան երբևէ նկարել եմ նախկինում:

Այս օրինակներում խոսողը ոչ միայն արտահայտում է իր հասցեին գովեստ, այլ նաև սպասում է, նույնիսկ խոսընկերոջը դրդում է, որպեսզի վերջինս դրական գնահատական տա իրեն, այսինքն՝ խոսողի հաղորդակցական նպատակը հավանության, հիացմունքի արժանանալն է խոսակցի կողմից, այլ կերպ ասած՝ նա խախտում է համեստության մաքսիմը՝ խուսափի ինքնագովեստից:

1. *Why, I could run this store better than he does! And I could run a mill better than he could...*¹⁴.

¹¹ Wilder, T. Our Town / Three Plays. N.Y.: Harper Perennial Modern Classics, 2007.

¹² Wilde, O. The Picture of Dorian Gray. USA: Penguin Books, 1980.

¹³ Maugham, W.S. The Moon and Sixpence. M.: Progress Publishers, 1972.

¹⁴ Mitchel, M. Gone with the Wind. N.Y.: Avon Books, 1973.

Ինչու, ես կարող էի այս խանութը ավելի լավ աշխատեցնել, քան նա: Եվ ես կարող էի գործարանը ավելի լավ դեկավարել, քան նա...:

2. *Miss Price dislikes me because I have humour, -said Clutton, looking meditatively at his canvas, -but she detests me because I have genius*¹⁵.

Միսս Փրայսը չի սիրում ինձ, որովհետև ես հումորի զգացում ունեմ,- ասաց Բլաթոնը՝ մտախոհ նայելով իր կտավին,- բայց նա ատում է ինձ, որովհետև ես տաղանդավոր եմ:

3. *I was rather literary in college – one year I wrote a series of very solemn and obvious editorials for the Yale news*¹⁶.

Ես գրականությամբ էի զբաղվում քոլեջում. մեկ տարի ես գրում էի մի շարք շատ լուրջ և աչքի ընկնող խմբագրականներ Yale news -ի համար:

Մեր համոզմամբ՝ գովեստի ակնկալման առավել հաջող իրադրություն կարող է ստեղծվել հետևյալ խոսքային և/կամ ոչ խոսքային **ինքնագովեստի** տեսակների օգնությամբ, որոնք, ըստ էության, գովեստի ակնկալման շարժառիթներ են. խոսողի ուղղակի հարցում նրա արարքների/հատկանիշների մասին, խոսակիցներից կարծիքի հարցում (ակնհայտ և ոչ ակնհայտ), գովեստի առիթի ստեղծում, ըստ էության՝ դրական ինքնագնահատական:

1. *"You haven't said a word about my appearance."*

*"You look just fine*¹⁷.*"*

- **Դու ոչ մի խոսք չես ասել իմ արտաքինի մասին:**

- **Դուք լավ տեսք ունեք:**

2. *"How do I look?"*

*"Lovely, Blanche..."*¹⁸.

-**Ինչպիսի՞ տեսք ունեմ:**

-**Միքուն, Բլանշ...**

Այս օրինակներում ինքնագովեստի նախաձեռնողը ձգտում է ստանալ աջակցություն, հավատալ իր ուժերին և հնարավորություններին: Հաճախ զրուցակցից աջակցություն ստանալու մտադրությունը ուղեկցվում է հաղորդակցությունը նախաձեռնողի ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային գործողություններով:

Մի շարք դեպքերում ինքնագովեստի ակտի պերլոկուտիվ արդյունքը անսպասելի է լինում հասցեագրողի համար՝ արտահայտվելով վերջինիս գովեստի ակտով:

¹⁵ **Maugham, W.S.** Of Human Bondage. Moscow: Vyssaya Skola, 1985.

¹⁶ **Fitzgerald, F. S.** Selected Short Stories. Moscow: Progress Publishers, 1979.

¹⁷ **Williams, T.** A Streetcar named Desire. N.Y: New Directions Publishing, 2004.

¹⁸ Նույն տեղում:

"I'm third this month," she boasted. "Elsie. is only about eighteenth, and Richard is about at the bottom."

"I'm very pleased that you're doing so well at school."

"You like Richard and Elsie, don't you?"

"Oh, yes. I like Richard quite well and I like her all right" ¹⁹.

Ես երրորդն եմ այս ամիս, - պարծեցավ նա: - Էլսին ընդամենը տասնութերորդն է, իսկ Ռիչարդը մոտավորապես ներքևում է:

- Ես շատ գոհ եմ, որ դու այդքան լավ ես սովորում դպրոցում:

- Դուք հավանում եք Ռիչարդին և Էլսիին, այնպես չէ՞:

- Օ, այո՛: Ես շատ եմ սիրում Ռիչարդին, ու նաև նա ինձ դուր է գալիս:

Տվյալ համատեքստը գովեստի ակտի իրականացում է՝ ինքնահաստատման իրադրության շրջանակներում, որը, իբրև գովեստի ստացման շարժառիթ, ստեղծվել է խոսողի կողմից ինքնագովեստի միջոցով. պատասխան արձագանքում նա ստանում է իր հասցեին գովեստ:

Երբեմն խոսողը ինքնանվաստացման, իրենից դժգոհելու ճանապարհով կարող է գովեստ ակնկալել: Ստորև բերված օրինակը վկայում է ասվածը.

Rebecca: Every day I go to school dressed like a sick turkey.

Mrs. Gibbs: No, Rebecca, you always look very nice. ²⁰.

Ռեբեկա. Ես ամեն օր գնում եմ դպրոց հիվանդ հնդկահավի պես հագնված:

Տիկին Գիբս. Ո՛չ, Ռեբեկա, դու միշտ շատ գեղեցիկ տեսք ունես:

Հաղորդակցման գործընթացում բոլոր ասույթները իրականանում են որոշակի համատեքստում և, բացի տեղեկատվական բնույթից, ունեն նաև սոցիալ-համատեքստային իմաստ:

Եզրակացություն

Այսպիսով՝ տրամաբանական խոսքի նկարագրության համար բավական չէ միայն լեզվաբանական մոտեցումը, այն պետք է ենթարկվի առավել ընդարձակ հոգեբանական կամ էլ սոցիալ-հոգեբանական վերլուծության: Այս դեպքում հաղորդակցական իրադրությունները, որոնցում գովեստի իրականացումը միանգամայն պատշաճ և հաջող է, լինում են երկու տեսակի.

1. Իրադրություններ, որոնցում սուբյեկտի կողմից գովեստի իրականացումը պայմանավորված ու նաև արդարացված է նրա՝ իսկապես բարձր կարգավիճակով գովեստի օբյեկտի համեմատ: Նմանատիպ գովեստը կիրառվում է հատկապես ղեկավար-ենթակա, ուսուցիչ-աշակերտ, ծնող-երեխա հարաբերություններում:

¹⁹ Fitzgerald, F. S. Babylon Revisited / Selected Short Stories. Moscow: Progress Publishers, 1979.

²⁰ Wilder, T. Our Town / Three Plays. N.Y.: Harper Perennial Modern Classics, 2007.

2. Իրադրություններ, որոնցում հավասար կամ առավել ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող խոսողն իրեն բարոյական իրավունք է վերապահում տալ դրական գնահատական իր խոսքնկերոջը՝ գովաբանել նրա գործողությունները, բնավորության գծերը, արտաքին տվյալները՝ հիմնվելով կոնկրետ հաղորդակցական իրադրությունում նրան առաջարկված կամ անձամբ նրա ստանձնած որոշակի դերով: Նման իրադրությունները արտացոլում են ամուսնու և կնոջ, եղբոր և քրոջ, ընկերների և այլոց շփումը:

2-րդ իրադրությունը բնորոշ է նաև **ինքնագովեստին** (հազվադեպ, սակայն, հնարավոր է ինքնագովեստ նաև 1-ին իրադրության պայմաններում): Դա բացատրվում է այն բանով, որ խոսողը մտադիր է առանձնանալ իր հասակակիցներից կամ միևնույն կարգավիճակը/դերն ունեցող իր հաղորդակիցներից՝ չանտեսելով համեստության կարգախոսը, ինչը պարտադիր տեղի կունենար դեկլավարի ներկայությամբ ինքնագովեստի դեպքում:

Ինքնահաստատման իրադրության շրջանակներում (2-րդ իրադրություն) **ինքնագովեստի խոսքային ակտը** առավել հաճախ ներառում է նախաձեռնողական գործողություններ: Գովեստի օբյեկտը տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվել է, միաժամանակ նաև դրա սուբյեկտն է: Ինքնահաստատման իրադրությունը ենթադրում է հաղորդակիցներից մեկի ներկայությամբ իր հասցեին խոսակցից դրական գնահատական ստանալու մտադրության առկայություն՝ վերջինիս մեջ առաջացնելով որոշակի հուզական վիճակ (կարեկցանք, համակրանք և այլն): Այդ իրադրության նախաձեռնողը ձգտում է ստանալ աջակցություն, ինքնահաստատվել, հավատալ իր ուժերին և հնարավորություններին: Հաճախ հաղորդակցի նման մտադրությունը՝ զրուցակցից աջակցություն ստանալու, ուղեկցվում է շփման նախաձեռնողի ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային գործողությունների միջոցով:

Մեր կողմից նկարագրվող **ինքնագովեստով** արտահայտված խրախուսական իրադրությունը (ինքնահաստատման), ընդհանուր առմամբ, շփման գործընթացում կարող է ունենալ հետևյալ պատկերը.

Խ₁-ը առաջին հաղորդակիցն է (իր հասցեին գովեստի ակնկալման իրադրության նախաձեռնողը, այսինքն՝ գովեստի ենթադրյալ օբյեկտը), Խ₂-ը՝ երկրորդ հաղորդակիցն է (Խ₁-ի կողմից ակնկալվող գովեստի պոտենցիալ սուբյեկտը), Դ-ն՝ իրերի իրական դրությունը:

Խ₁-ը մտադիր է ստանալ խրախուսում իր հասցեին Խ₂-ի կողմից: Այդ դեպքում Խ₁-ը իրականում լիովին վստահ չէ, որ իր որակները կամ արարքները դրական են: Այսպիսով՝ Խ₁-ի՝ Խ₂-ի կողմից իր արժանիքների մասին բարձր գնահատական ստանալու հիմնական նպատակը ինքնահաստատումն է, հավատը իր ուժերի և հնարավորությունների հանդեպ: Խ₁-ը ակնհայտորեն կասկածի չի ենթարկում Խ₂-ի գնահատականի անկեղծությունը, որին նա սպասում է. այն պայմանի դեպքում, որ Խ₂-ը կվերծանի Խ₁-ի

մտադրությունը, այսինքն՝ որպես ինքնահաստատման համար խրախուսում ստանալու մտադրություն, ինչպես նաև այն պայմանի դեպքում, որ Խ2-ը իսկապես դրական է համարում Խ1-ի հատկանիշները, արարքները և անհրաժեշտ է համարում արտահայտել նման գնահատական խոսքային և/կամ ոչ խոսքային գործողություններով, այդ դեպքում Խ1-ի և Խ2-ի մտադրությունները համընկնում են: Խ1-ը ստանում է անկեղծ խրախուսում, նրա հաղորդակցական նպատակը կայացել է, Խ2-ը նույնպես իրականացրել է իր մտադրությունը՝ արտահայտելով գովեստ Խ1-ի հասցեին:

Վերջինը ստանում է դրական գնահատական հետևյալ եղանակով՝ Խ2-ը ցանկանում է ցույց տալ Խ1-ին, որ նրա արտաքին տեսքը, որակները և արարքները գնահատվել են բարձր, ըստ արժանվույն: Նա նաև ցանկանում է վստահեցնել Խ1-ին, որ ինքը (Խ2-ը) անկեղծ է և համակրում է Խ1-ին, հետևաբար՝ փորձում է որոշակի գործողությամբ իրականացնել իր մտադրությունը՝ հնարավորինս բարեհաջող և ամբողջական, և դրանով իսկ՝ հնարավորինս արդյունավետ իրականացնել իր հաղորդակցական նպատակը, որը Խ1-ին խրախուսելն է՝ նրա հասցեին անկեղծ և իսկապես բարձր գնահատական արտահայտելու միջոցով: Եթե Խ1-ը վերձանի Խ2-ի գործողությունները ճիշտ՝ Խ2-ի պարզ, ոչ գաղտնի մտադրությունների տեսանկյունից, ապա Խ2-ի նպատակը իրականացված է, մտադրությունը բարեհաջող և ամբողջական հասցվել է Խ1-ին. հետևաբար, հետապնդվող խնդիրը լուծված է:

Այսպիսով, ինքնագովեստը ոչ միայն լեզվաբանական երևույթ է, այլև սոցիալական ռազմավարություն, որը կախված է խոսակիցների միջավայրից, մշակութային առանձնահատկություններից և հոգեբանական գործոններից:

НАРИНЕ ГАСПАРЯН – Семантико-прагматическая характеристика речевого акта самовосхваления. – Целью данной статьи является представление семантических и прагматических особенностей речевых актов выражающих самовосхваление. В отличие от похвалы, самопохвала имеет негативный оттенок. В ходе этого акта говорящий заявляет о своих достоинствах, успехах, умениях и качествах с целью представить их в положительном свете. Самовосхваление – это вид похвалы, при котором говорящий адресует положительную оценку самому себе, в этом случае адресат самовосхваления одновременно выступает и в качестве адресата похвалы, то есть при реализации самовосхваления говорящий является одновременно субъектом оценки и объектом. Он пытается повысить свою самооценку, произвести впечатление на других и создать себе репутацию. Цель этого поступка – завоевать внимание и восхищение, намерение самовозвеличивающегося человека состоит в том, чтобы добиться своей цели, пытаясь добиться одобрения собеседника, в результате чего его вербальное и невербальное поведение может выражаться даже в самоуничижении. Если самовосхваление скромное и уместно в контексте, оно может повысить авторитет человека, в то время как чрезмерное самовосхваление может быть воспринято как высокомерие. Реализация данного акта обусловлена разными статусными и ролевыми характеристиками коммуникаторов. Настоящая статья

является попыткой выделить семантические и прагматические характеристики этих речевых актов.

Ключевые слова: *речевой акт, самовосхваление, перлокутивный результат, коммуникативная цель, иллокутивное намерение, адресат.*

NARINE GASPARYAN – The Semantic-Pragmatic Characteristics of the Speech Act of Self-praise. – The purpose of the article is to present the semantic and pragmatic features of speech acts expressing self-praise. Unlike praise, self-praise has a negative connotation. It can be expressed through different perlocutionary acts. The purpose of this act is to gain attention and admiration, trying to please the listener and gain his approval with his verbal and non-verbal behaviour, pleasing the addressee. While realising this act, the speaker declares about his merits, successes, skills and qualities in order to present them in a positive light. Self-praise is a type of praise when the speaker addresses a positive assessment to himself; that is, in this case, the recipient of the self-praise acts as the recipient of the praise at the same time. He tries to strengthen his self-esteem, impress others, and establish authority.

If self-praise is modest and consistent with the context, it can strengthen the person's authority, while excessive self-praise can be perceived as arrogance. The intention of a self-praising person is to achieve his goal by trying to gain the approval of the interlocutor, as a result of which his verbal and non-verbal behavior can be expressed even in self-deprecation by using self-humiliating expressions. The implementation of this act is conditioned by the different status and role characteristics of the communicators. The present paper is an attempt to outline the semantic and pragmatic peculiarities of these speech acts.

Key words: *speech act, self-praise, perlocutive result, communicative purpose, illocutive intention, addressee.*

Գրականության ցանկ

- Գասպարյան, Ն. (2024). Գովաբանության դիսկուրսի իմաստագործաբանական բնութագիրը // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն № 3, 99-110 էջեր: (Gasparyan, N. (2024). *Govabanut'yan disk'ursi imastagortsabanakan bnuthagrut'yune* // *Banber Yerevani hamalsarani. Banasirut'yun*, Vol. 15, No. 3 (45), ej. 99–110).
- Богданов, В.В. (1990). *Коммуникативная компетенция и коммуникативное лидерство / Язык, дискурс, личность*. Тверь: Издательство Тверского университета, 28 с. (Bogdanov, V. V. (1990). *Kommunikativnaya kompetentsiya i kommunikativnoe liderstvo* // *Yazyk, diskurs, lichnost'*. Tver': Izdatel'stvo Tverskogo universiteta, 28 s.).
- Вольф, Е.М. (1985). *Функциональная семантика оценки*. М.: Наука, 279 с. (Volf, E. M. (1985). *Funktsional'naya semantika otsenki*. M.: Nauka, 279 s.).
- Кларк, Г. Г., Карлсон, Т. Б. (1986). *Слушающие и речевой акт // Новое в зарубежной лингвистике*, Вып. 17. Теория речевых актов. М.: Прогресс, 276 с. (Klark, G. G., Karlson T. B. (1986). *Slushayushchie i rechevoy akt* // *Novoe v zarubezhnoy lingvistike*, Vyp. 17, *Teoriya rechevykh aktov*. M.: Progress, 276 s.).
- Формановская, Н.И. (1980). *Эмоции, чувства, интенции, экспрессия в языковом и речевом выражении // Эмоции в языке и речи: Сборник научных статей / Под ред. И.А. Шаронова*. М.: РГГУ, с. 106-116. (Formanovskaya, N. I. (1980). *Emotsii, chuvstva, intensii, ekspressiya v yazykovom i rechevom vyrazhenii* // *Emotsii v yazyke i rechi: Sbornik nauchnykh statey* / Pod red. I. A. Sharonova. M.: RGGU, s. 106–116).
- Cutting, J. *Pragmatics and Discourse*. London and New York: Routledge, 2002, 187 p.
- Davis, S. *Perlocutions // Speech Act Theory and Pragmatics*. London, 1980, p. 37–55.
- Fitzgerald, F. S. *Babylon Revisited / Selected Short Stories*. Moscow: Progress Publishers, 1979, 360 p.

- Fitzgerald, F. S.** *Selected Short Stories*. Moscow: Progress Publishers, 1979, 360 p.
- Maugham, W. S.** *The Moon and Sixpence*. M.: Progress Publishers, 1972, 240 p.
- Maugham, W. S.** *Of Human Bondage*. Moscow: Vyssaya Shkola, 1985, 607 p.
- Maugham, W. S.** *Our Betters // Maugham S. Selected Plays*. London: Pan Books, 1977, p. 353–448.
- Maugham, W. S.** *Theatre*. Moscow: Vyssaya Shkola, 1985, 224 p.
- Mitchell, M.** *Gone with the Wind*. N. Y.: Avon Books, 1973, 1024 p.
- Wilde, O.** *The Importance of Being Earnest*. UK: Longman, 2005, 112 p.
- Wilde, O.** *The Picture of Dorian Gray*. USA: Penguin Books, 1980, 237 p.
- Wilder, T.** *Our Town / Three Plays*. N. Y.: Harper Perennial Modern Classics, 2007, 496 p.
- Williams, T. A.** *A Streetcar Named Desire*. N. Y.: New Directions Publishing, 2004, 192 p.